

## Ծածկագիր

12-2-ՔՅ9-Մ4-2

## Պաշտոնի Անվանում

Ավագ փաստաթղթավար

## Պաշտոնի Ամբողջական Անվանում

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ | Ընդհանուր աշխատանքների խումբ | Ավագ փաստաթղթավար

## Անմիջական Ղեկավարի Պաշտոն (Օգտագործվում է վերապատրաստման հատվածում)

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ | Ընդհանուր աշխատանքների խումբ | Խմբի ղեկավար

## Ենթակա և հաշվետու է

Ավագ փաստաթղթավարն անմիջական ենթակա և հաշվետու է Խմբի ղեկավարին:

## Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ փաստաթղթավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Խմբի փաստաթղթավարը:

## Աշխատավայր

Հայաստան, Շիրակի մարզ, գյուղ Հառիճ:

## Աշխատանքի բնույթը (գործառնություններ)

1. հետևում է դատապարտյալների, կալանավորված անձանց և քաղաքացիների կողմից ստացված դիմումների ժամանակին առաքմանը և կատարմանը համապատասխան ստորաբաժանման կողմից.
2. նախապատրաստում է ժամկետանց գործերի և մատյանների ոչնչացման ցուցակները, կազմում համապատասխան ակտի նախագիծ և ներկայացնում Բաժնի պետին.
3. իրականացնում է հասցեագրված փաստաթղթերի՝ անմիջապես կատարողին հանձնելու, դրանց ժամանակին կատարումն հսկելու աշխատանքները.
4. սահմանված կարգով վարում է արխիվը.
5. Mulberry համակարգով կատարում է համապատասխան աշխատանքներ.
6. մասնացնում է Էլեկտրոնային արխիվացման աշխատանքներին.

## Իրավունքները

1. ծանոթանալ քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների բովանդակություններին, նյութերին, անհրաժեշտության դեպքում այլ ստորաբաժանումից պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր.
2. համապատասխան ստորաբաժանումներից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, հիմնավորումներ, պարզաբանումներ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն.

## Պարտականությունները

1. ուսումնասիրել ստացված փաստաթղթերը և նախապատրաստել իրավական ակտերի նախագծեր.
2. սահմանված կարգով և ժամկետներում ապահովել փաստաթղթաշրջանառության աշխատանքները.
3. ուսումնասիրել ներկայացված փաստաթղթերի համապատասխանելիությունը իրավական ակտերի պահանջներին.
4. ուսումնասիրել զեկուցագրերը, հիմնավորումները և ներկայացնել Բաժնի պետին.
5. ուսումնասիրել ստացված դիմումները, առաջարկությունները, օրենքով սահմանված ժամկետում պատասխանել դիմումներին, առաջարկություններին.
6. օրենքով սահմանված ժամկետում մուտքագրել, փոփոխել, գրանցել և արխիվացնել տվյալները համապատասխան ծրագիր.

#### [Կրթություն, որակավորման աստիճանը](#)

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

#### [Մասնագիտական գիտելիքները](#)

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

#### [Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը](#)

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ փաստաթղթավարության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ.

#### [Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը](#)

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:

#### [Որոշումներ կայացնելու լիազորությունները](#)

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

#### [Գործունեության ազդեցությունը](#)

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

#### [Շփումները և ներկայագուցությունը](#)

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

#### [Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը](#)

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

## Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- **ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ**
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
- **ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ**
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

[Անվանագանկում Պաշտոնի Հաստատման Ամսաթիվ/Պաշտոնի ստեղծման ամսաթիվ](#)

2026-03-02